

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԲԵՆԻԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ--	5
2.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	18
3.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ,ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	19
4.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....	20
5.ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ	29
6.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳԻՐԸ.....	31
ԵԶՐԱՓՈԿՈՒՄ	32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Բենիամին համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ **ՀԶԾ**) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» և նույն կազմակերպության կողմից 2016 թվականին մշակված «Բազմաբնակավայր համայնքում «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման» ուղեցույցի¹ մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Բենիամին համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶԾ-ի մշակմանը մասնակից համայնքի անդամների կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի հետ միասին մշակել է համայնքի 2017-2021 թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողությանմեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն ներկայացնում է Բենիամին համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶԾ-ն ներառում է նաև Բենիամին համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Բենիամին համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Բենիամին գյուղի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձվել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈւԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վերանձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶԾ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀԶՀԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

ՀԶՀԾ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶՀԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀԶՀԾ-ում փոփոխությունների (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Համայնքի նախկին անվանումը Ճլոխան, հիմնադրվել է 19-րդ դարում, 1945 թվականից վերանվանվել է Բենիամին, ի պատիվ համագյուղացի հերոս Բենիամին Գայսոյանի հիշատակի: Գյուղի բնակիչները իրենց մասնակցությունն են ունեցել Հայրենական Մեծ պատերազմին, Արցախյան հերոսամարտին: 1941-1945 թթ պատերազմում 42 հայորդի է զոհվել Բենիամին գյուղից: Արցախյան հերոսամարտում զոհվածի հիշատակին գյուղի կենտրոնում կանգեցվել է հուշաքար:

Բենիամին համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 110 կմ, մարզկենտրոնից՝ 15 կմ, իսկ Երեվան-Գյումրի մայրուղուց՝ 1 կմ:

Գյուղը գտնվում է Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում: Գյուղի վարչական տարածքով հոսում է «Կարկաչուն» գետակը: Մահմանակից են՝ Ազատան, Սարատակ, Լուսակերտ, Գուսանագյուղ, Բայանդուր համայնքները:

Գտնվում է ծովի մակերևույթից 1300 մետր բարձրության վրա:

Ջերմաստիճանը ձմռանը 22-25 աստիճան 0-ից ցածր է ըստ Ցելսիուսի, ամռանը՝ 27-29 աստիճան է: Տեղումների միջին քանակը տատանվում է 260-380 մմ:

Համայնքում հայտնաբերվել են պատմա-ճարտարապետական նշանակություն ունեցող դամբարանադաշտեր, տարածքներ, որոնք ըստ հնագետների վերագրվում են մ.թ.ա. 2-րդ-ից 1-ին դարերին:

Գյուղի կենտրոնական մասում կա կառուցված եկեղեցի թվագրված 1870 թվական:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են և երբեմն ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Վարելահողերի 43 տոկոսը ջրովի են և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Չմեռը մեղմ է, ամառը զով է, երբեմն էլ շոգ ու երաշտ: Երբեմն զարնանացանի դաշտերին ամռան սկզբներին սպառնում են ցրտահարությունները:

Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են դաշտավարությամբ և անասնապահությամբ:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բենիամին համայնքի մշտական բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 757 մարդ, որից 376 տղամարդ և 381 կին: Առկա բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 687 մարդ որից 347 տղամարդ և 343 կին:

Մշտական տնտեսությունների թիվն է 160. Առկա տնտեսությունների թիվն է 145.

Համայնքի առկա բնակչության տարիքային կառուցվածքը կազմն է՝

0-4 տարեկան –42

5-6 տարեկան –20

7-10 տարեկան –32

11-14 տարեկան –	23
15-17 տարեկան –	39
18-22 տարեկան –	66
23-45 տարեկան –	242
46-62 տարեկան –	160
63 և ավելի տարեկան—	65
Կենսաթոշակառուներ—	87
Փախստականներ--	0
Միակողմանի ծնողագուրկ երեխաներ –	13
Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ –	0
Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը --	1
Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը—	3
Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը—	62
Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը—	116

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Բենիամին համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ավագանին իր 5 անդամներով: Բենիամինի համայնքի աշխատակազմը բաղկացած է 8 աշխատակցից:


Համայնքապետարանն ունի նստավայր, որը գտնվում է Բենիամին գյուղի փողոց 1 շենք 22 հասցեում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքը նորացված է: Համայնքապետարանի շենքը գազաֆիկացված չէ:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատում են համայնքի ավագանու որոշումներով:

Բենիամին համայնքի աշխատակազմն է՝

1. Համայնքի ղեկավար – քաղաքական պաշտոն
2. Համայնքի ղեկավարի տեղակալ – հայեցողական պաշտոն
3. Համայնքային ծառայության պաշտոններ
 Աշխատակազմի քարտուղար (1.2-1)
 Առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1)
4. Տեխնիկական սպասարկման անձնակազմ
 Հարկային գործակալ
 Ակումբավար
 Բակապահ
 Հավաքարար

Գծապատկերում ներկայացված է Բենիամին համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը



1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բենիամին համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններն են՝ «Բենիամինի միջնակարգ դպրոց» ոչ առևտրային կազմակերպությունը, բուժկետը, փոստի բաժանմունքը: Նշված կազմակերպությունների հետ ՏԻՄ-երի համագործակցությամբ արվում է ամեն հնարավորը տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բենիամին համայնքում աղբահանությունը իրականացվում է շաբաթական մեկ անգամ: Տեղադրված են 20 աղբամաններ, որոնք անվճար հիմունքներով 2014 թվականին համայնքին են տրամադրվել «Հայկական Կարմիր խաչ» կազմակերպության կողմից: Աղբահանությունը սպասարկվում է Գյումրի քաղաքի «Ա/Ձ Արամայիս Համբարյան» կազմակերպության կողմից: Աղբահավաք մեքենայի ուշացումները բացասաբար են անդրադառնում գյուղի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ: Բնակավայրի բոլոր տները սեփական են, բացառապես միհարկանի: Սեփականաշնորհված մեկ հողաբաժինը մեկ հեկտար է, տնամերձ հողամսերի միջին չափը 2500 քմ է:

Բնակավայրն ունի լուսավորության ցանց, որը սակայն կառուցված է ընդհանուր բնակավայրին էներգիա մատակարարող հենասյուների վրա: Անհրաժեշտություն կա հետագայում հենասյուները առանձնացնել և փոխարինել նորերով:

Խմելու ջրի մատակարարումը շուրջօրյա է: 2011 թվականին «Հայկական Կարիտաս»-ի օգնությամբ վերակառուցվել են խմելու ջրագծերի մեծ մասը: Գյուղը գազաֆիկացված է: Անհրաժեշտություն կա կուլտուրայի տունը ևս գազաֆիկացնել: Համայնքը ունի մակապարտեզի շենք, որը չի ծառայում իրեն նպատակին և այժմ գտնվում է անմխիթար վիճակում: Բավարար միջոցների հայթայթման պարագայում հնարավոր է այն դարձնել «Համայնքային կենտրոն»: Համայնքի ոռոգման ներքին ցանցը ունի վերանորոգման կարիք:

Գերեզմանատունը ցանկապատված է /2016 թվական/ :

1.6 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Բենիամին Համայնքում բնակելի տների թիվը 160 է. հիմնականում առանձնատներ , որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 30260 քմ :

Համայնքում բնակֆոնդի վիճակը, ընդհանուր առմամբ, գնահատվում է բավարար: Բնակավայրում կառուցված առանձնատները հիմնականում 1965-1990-

ականների կառույցներ են՝ պարբերաբար վերանորոգումներով գտնվում են լավ վիճակում: Համայնքում չկան հողե պատերով ու առանց կտուրի բնակելի տներ:

1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ Բենիամին համայնքի բնակավայրում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը մեկ հեկտար է առանց տնամերձ հողամասի:

Հողային հաշվեկշիռը ունի հետևյալ տեսքը

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր - 688,1 հեկտար, որից Վարելահող-417,2 հեկտար
Արոտ- 257,7 հեկտար
Այլ հողեր -13,2 հեկտար
2. Բնակավայրի հողեր -82,44 հեկտար , որից
Տնամերձ – 61,06 հեկտար
3. Արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր -5,74 հեկտար
4. Էներգետիկայի , կապի , տրանսպորտի և կուլմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր - 2,09 հեկտար
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր -74,39 հեկտար
6. Ջրային հողեր – 7,79 հեկտար
7. Քաղաքացիների սեփականության հողեր – 371,8 հեկտար
8. Համայնքային սեփականության հողեր – 407,02 հեկտար
9. Պետական սեփականության հողեր – 81,7 հեկտար
10. Ընդամենը վարչատարածք՝ 860.54 հեկտար

1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բենիամին համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկ / ցորեն, գարի/, բազմամյա և միամյա խոտ, կարտոֆիլ , բանջարեղեն և այլ կուլտուրաներ: Սակայն անջրդի հողատարածքներից համայնքի բնակիչները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների, խոտի ու բանջարանոցային կուլտուրաների, կարտոֆիլի արտադրությունը հանդիսանում են Բենիամին համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքի բնակիչները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսություններ չկան, ազգաբնակչության մի մասն էլ ընդհանրապես անասուն չի պահում: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Բնակավայրում բացակայում

են անասունների ջրելատեղիները: Ջրելատեղիների առկայությունը կավելացնի անասունների մթերատվությունն ու կաթնատվությունը :

Բենիամին համայնքում կան մեղվաբուծությամբ զբաղվողներ/մոտ 75 փեթակ/ սակայն տարիների կտրվածքով մեղվի համար եղանակային պայմանները լավ են լինում մեկընդմեջ:

Համայնքի բնակիչները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և կարտոֆիլ:

Բենիամին համայնքում ոռոգման ջուրը սպասարկվում է «Շիրակ» ՋՕԸ-ի կողմից, պոմպակայանի միջոցով և ինքնահոս եղանակով: Սակայն ոռոգման ներքին ցանցում շատ են ջրային կորուստները, որոնք կազմում են շուրջ 15-20 տոկոս:

Բենիամին համայնքում առկա անասնազվիսաքանակի վերաբերյալ տվյալներն են ըստ առանձին խմբերի:

Խոշոր եղջերավոր անասուններ- 431 գլուխ, որից
կովեր—201 գլուխ
խոզեր-- 27գլուխ,
որից մայրական կազմ -13 գլուխ
ոչխարներ—192գլուխ,
որից մայրական կազմ—153գլուխ
ձիեր—1 գլուխ
մեղվափեթակ --70 հատ

1.9 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բենիամին համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանամաքրումը: Համայնքը չունի կոյուղի : Համայնքը չունի կենտրոնացված աղբավայր:

Բենիամին համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կառուցել կոյուղի և կովեկտոր,
- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները /հիմնել անտառաշերտ/,
- կառուցել կենտրոնացված աղբավայր,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում ավելացնել աղբամանների թիվը,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բենիամին համայնքն ունի մոտ 12 կմ երկարությամբ փողոցներ (ներքնակավայրային ճանապարհներ), մոտ 20 կմ երկարությամբ հանդամս տանող դաշտամիջյան ճանապարհներ: Ճանապարհների և փողոցների մեծ մասն անբարեկարգ է: Ճանապարհները հիմնականում գրունտային և խճապատ են: Համայնքի տարածքում ճանապարհներից կիսասաֆալտապատ է միայն՝ Երևան-Գյումրի ավտոմայրուղուց մինչև գյուղի կենտրոնական մասի հատվածը:

Համայնքի տարածքում տեղադրված են թվով 3 կանգառներ :

Ստորև ներկայացվում են Բենիամին համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի ցանկը հասցեն ու վիճակը՝

1.Մշակույթի տան շենք (ներառյալ վարչական նստավայրի սենյակները համայնքային ոստիկանի սենյակը,) հասցեն– փողոց 1 շենք 22, վիճակը -- բավարար

2.Ներքնակավայրային ճանապարհներ/փողոցներ/ հասցեն՝ գ. Բենիամին, վիճակը՝ բավարար

3.Փողոցների լուսավորության ցանց հասցեն՝ գ. Բենիամին, վիճակը՝ լավ

4.Ծառայողական ավտոմեքենա ՎԱԶ 21063 հասցեն՝ գ. Բենիամին, վիճակը՝ վատ

5.Մանկապարտեզի շենք գ. Բենիամին, 1980թ. 300քմ վիճակը՝ շատ վատ . անհրաժեշտ է վերակառուցել

6.Ոռոգման ջրի ներքին ցանց , գ. Բենիամին, 10400 գծմ վիճակը՝ բավարար անհրաժեշտ է վերանորոգել:

7.1941-1945թթ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձան կառուցված 1973 թվականին, վիճակը լավ

8.Եկեղոցի. վիճակը շատ վատ

Բենիամին համայնքի բնակիչների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների նկարագիրն ու քանակները:

Մարդատար ավտոմեքենաներ –75

Միկրոավտոբուսներ--2

Բեռնատար ավտոմեքենաներ --10

Կոմբայններ --3

Վարի տրակտորներ,

որից

ա/ թրթուռավոր -- 8

բ/ անվավոր--2

Բելառուսներ- 12

Կցասայլակներ 6

1.11 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բենիամին համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի երկու խանութներ /երկու աշխատող/, մեկ ռեստորան /երկու աշխատող/:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն):

1.12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Բենիամին համայնքում գործում է 1 միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 87 աշակերտ 45 սղա և 42 աղջիկ: Արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազում է: Դպրոցի շենքը կարիք ունի մասնակի նորոգման: Դպրոցն ունի լոկալ ջեռուցում: Դպրոցում գործում է նախակրթարան: Նախակրթարան են հաճախում 9 երեխա 5 տղա, 4 աղջիկ: Նախակրթարանի սաներին և 1-ից 4-րդ դասարանների աշակերտներին տրվում է սնունդ: Դպրոցում աշխատում են 25 աշխատակից, որից 24 –ը մանկավարժներ, այդ թվում 14-ը բարձրագույն կրթությամբ:

1.13 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բենիամին համայնքում չկան մշակութային օջախներ, չնայած, որ նախկինում համայնքի կուլտուրայի տանը գործել են ինքնագործ պարի և թատերական խմբեր :Այդ խմբերը երկար ժամանակ նախկին Ախուրյանի շրջանի բոլոր գյուղերում ունեցել են դիտարժան ելույթներ ու արժանացել են համաժողովրդական գովասանքի: Սակայն այժմ կուլտուրայի տունը որպես այդպիսին անգործության է մատնված: Համայնքը չունի գրադարան /ողջ գրքային ֆոնդը հանձնվել է <<Բենիամինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ին: Համակարգչային տեխնիկան ու տեխնոլոգիաները համայնքի ազգաբնակչության և հատկապես երիտասարդության կյանքից գրեթե հանել են գիրք կարդալն ու ընթերցանությունը:

1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Բենիամին համայնքի վարչական տարածքում գործում է ոչ համայնքային ենթակայության բուժկետը, որտեղ աշխատուն է մեկ բուժքույր: Բուժկետը հիմնականում իրականացնում է առաջին բուժօգնության ծառայություններ: Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Գյումրի քաղաքից կամ Ախուրյանից (համայնքի հեռավորությունը Գյումրի քաղաքից 15 կմ է):

Սպորտը առավել զարգացնելու համար համայնքին անհրաժեշտ է ունենալ մեծ սպորտային կոմպլեքս: Համայնքի տարածքում սպորտդահլիճներ չկան. որպես այդպիսին առկա է միայն դպրոցում, սակայն սպորտդահլիճում պակասում է համապատասխան գույքը: Բնակավայրում առկա է բացօթյա խաղահրապարակը, վոլեյբոլ խաղալու համար համապատասխան տարածք:

1.15 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի տարածքում կան ծառաշատ տարածքներ, որտեղ բնակիչները կարող են անցկացնել իրենց հանգիստը: <<ԹԱՔԾԱՌ>>, <<ԶԻՎԱՆԻ ԾԱՌՆԵՐ>> - այսպես են կոչվում այն տեղերը, որտեղ հաճախ են այցելում Բենիամին համայնքի անդամները, ինչպես նաև այլ վայրերից ժամանած բազմաթիվ հյուրեր: Բնակավայրում մասնակի բարեկարգ զբոսայգի կա դպրոցի բակում: դպրոցի բակում ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՈՒՆԸ կառուցվել Վորլդ Վիժն միջոցներով: Բոլորովին վերջերս ծառապտվեց 1.6-1.8 հեկտար տարածք: Ակումբի բակում տեղադրված են զբաղվելու և ազատ ժամանակը լիարժեք անցկացնելու համար տեղադրված նստարաններ, որտեղ իրենց զբաղմունքն են գտնում հատկապես մեծահասակները մի պահ առօրյա հոգսերից կտրվելու, այդտեղ իրենց կարճատև հանգիստը կազմակերպելու նպատակով: Համայնքի կենտրոնական հատվածում գործում է անվճար Wi- Fi ինտերնետ կապ:

1,16 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Բենիամին համայնքի տարածքում չկան գործող գործարաններ կամ արտադրամասեր: Ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու հույսը մնում է միայն՝ համայնքապետարանում, դպրոցում կամ ՎեՄ ՍՊԸ-ում սեզոնային աշխատատեղերում աշխատելու հնարավորությունը: Երիտասարդության մեծամասնությունը ապավինում է ՌԴ – ում արտագնա աշխատանք փնտրելուն: Համայնքի աշխատունակների մեծ մասը համարվում են ինքնազբաղվածներ, որոնք զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Համայնքապետարանը հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով և խոցելի խմբերում հայտնված ընտանիքներին:

Համայնքապետարանի աշխատողը պարբերաբար վիճակագրությունով վեր է հանում համայնքի խոցելի խմբերին և ներկայացնում նմանատիպ խմբերին օգնելու նպատակով եղած կազմակերպություններին:

Ստորև ներկայացվում է Բենիամին համայնքում եղած աշխատունակ և գործազուրկ մարդկանց, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշները:

Միակողմանի ծնողազուրկ երեխաներ -13

Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ -0

Հաշմանդամներ-18

այդ թվում՝

Մանկուց հաշմանդամներ -1

Աշխատունակներ-514

Զբաղվածներ-314

Գործազուրկներ-200

Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը

1,17 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ լիարժեք իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում տեղադրված է տեղեկատվական ցուցատախտակ, որի

միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

- ✓ 06.05.2016թ. N 6-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 06.05.2016թ. N 7-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»
- ✓ 06.05.2016թ. N 8-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

1,18 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է Բենիամինի համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլուրտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Բենիամին համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնակավայրում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Ամենամեծ թաքստոցն է համարվում միջնակարգ դպրոցի նկուղ թաքստոցը: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

1,19 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՆԸ

Համայնքի գործարար միջավայրի ձևավորումն ապահովող և հետագայում այդ միջավայրը զարգացնող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է **ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** բաժնում:

Համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնա կան ցուցանիշները ներկայացված են **հավելված 1**-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Բենիամին համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կոյուղու կոլեկտորի բացակայություն
- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացման, կառուցման աշխատանքների անհրաժեշտություն
- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
- ✓ Կենդանիների մորթի իրականացման տարերայնություն /անխիղճ „ղասաբների,, կողմից խեղճ գյուղացիներին թալանելու առկայություն/
- ✓ Կաթի և կաթնամթերքի խիստ բարձր ինքնարժեքն ու խիստ ցածր գինը/ հիմնականում խոսքը կաթի մասին է, մեկ լիտր անարատ կաթը գնվում է գյուղացուց 100-120 դրամով, իսկ կես լիտր հանքային ջուրը վաճառվում է 120 - 140 դրամով , կամ որ նույնն է մեկ լիտր կաթն արժե կես լիտր հանքային ջուր /:
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն

- ✓ Նախադպրոցական դաստիարակության ոլորտում ծառայությունների բացակայություն

- ✓ Առողջության առաջնային կենտրոնի շենքային և գույքային անբավարար պայմաններ
- ✓ Միջնակարգ դպրոցի շենքային և գույքային անբավարար պայմաններ
- ✓ Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների շտաբի նորագույն գույքով համալրման անհրաժեշտություն
- ✓ Խմելու ջրի ցանցի հիմնանորոգման անհրաժեշտություն
- ✓ Ոռոգման ջրի արտաքին և ներքին ցանցի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
- ✓ Ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
- ✓ Փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Արոտավայրերում ջրելատեղերի (ջրախմոցեր և խողովակաշար) կառուցման անհրաժեշտություն
- ✓ Դաշտավարության բնագավառում նոր գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն
- ✓ Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Համայնքի երեխաների և երիտասարդների գիտելիքների (ժամանակակից տեխնոլոգիաներ) բարձրացման անհրաժեշտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՅՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը
- ✓ Համայնքում գործող վերջին տարներին ավելացած հասարակական կառույցներում որոշակի մարդկանց ներգրավումն ու նրանց աշխատանքով ապահովումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր, և այլն) ոչ բարվոք վիճակը
- ✓ Բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների թիվը
- ✓ ՏԻՄ-բնակչություն թույլ կապը
- ✓ Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն)
- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- ✓ Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բենիամին համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, համայնքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը հազար մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Բենիամին համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ

օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Բենիամին համայնքը դաշտավարական և անասնապահական մթերքներ արտադրող համայնք է, որտեղ բնակիչներն ապրում են վաղվա օրը բարեկեցիկ դարձնելու հույսով:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- ✓ Ապահովել համայնքի բնականոն զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտուրն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարելավել համայնքապետարանի նստավայրի շենքային և գույքային պայմանները
- ✓ Հասնել նրան, որ Բենիամին համայնքում կազմակերպվի նախադպրոցական կրթության մատուցում
- ✓ Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը

- ✓ Համայնքի բնակիչներին ապահովել նրանց հանգստի կազմակերպման, շփումների ապահովման հաճելի պայմաններով
- ✓ Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Համայնքում գործող հանդիսությունների սրահի համար ձեռք բերել միանման սեղան նստարաններ
- ✓ Արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները
- ✓ Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ
- ✓ Նպաստել կենդանիների մթերատվության բարձրացմանը
- ✓ Հնարավորության դեպքում կազմակերպել անասնապահական մթերքների /կաթի/ հավաքման, պաղեցման և վերամշակման արտադրամաս

**3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ)
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Բենիամին համայնքում գալիք 2017-2021 թթ. Ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Գյումրի քաղաքի հետ, որը համարվում է մարզային կենտրոն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում:
- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:
- Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատսպարանների և թաքստոցների կառուցում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ :

4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2015 թ` 68%: 2016թ.` 53%: 2017թ.` 63%: 2018թ.` 68%: 2019թ.` 68%, 2020թ.` 67%: 2021թ` 69%) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման / դոտացիաների/ հաշվին (աղյուսակ):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ. Բենիամին Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Ե Կ Ա Մ Տ Ա Յ Ի Ն Մ Ա Ս

/ հազար դրամ /

№	Ե կ ա մ ու տ ն ե թ	2015 փաստ ացի	2016 փաստ ացի	2017 պլան	2018 կանխ ատես	2019 կանխա տես	2020 կանխա տես	2021 կանխա տես
1	Հողի հարկ	1979.5	1530.2	2863.3	2100	2200	2350	2400
2	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1118.4	1174.6	1622.8	1200.0	1250	1300	1400
3	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	1.0	2.0	0.0	0	0	0	0
4	Տեղ.տուրք ոչ ոգելից խմիչքների	24.0	38.5	146	50	50	55	60
5	Տեղ.տուրք հանրային սննդի և զվարճանքի	90.0	0.0	0.0	0	0	0	0
6	Պաշտոնական դրամաշնորհներ (դոտացիաներ)	10535. 6	11376. 3	11376. 3	12000	12500	13000	13500
7	Գույքի (համայնքային սեփականություն համարվող հողերի	1355.1	655.1	1649.8	1800	1860	1920	2000

	վարձավճարներ) վարձակալությունից եկամուտներ							
8	Վարչական գանձումներ (տեղական վճարներ)	212.8	247.5	400	400	420	450	480
9	Հողի օտարումից մուտքեր	--	9333.5	0.0	0	0	0	0
	ընդամենը	15316. 4	21357. 9	18058. 2	17550	18280	19075	19480

Ծ Ա Խ Ս Ա Յ Ի Ն Մ Ա Ս

№	Ծ ա խ ս ե ր	2015 փ աստա ցի	2016 փաստ ացի	2017 պլան	2018 կանխա տես	2019 կանխա տես	2020 կանխ ատես	2021 կանխա տես
1	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	12171. 0	11378. 9	13000	13400	13400	13400	13400
2	Էներգետիկ ծառայություններ	623.0	616.2	700	730	750	770	800
3	Կոմունալ ծառայություններ	906.5	1115.2	990	1200	1200	1250	1300
4	Կապի ծառայություններ	285.9	132.8	132	150	150	150	150
5	Գույքի և սարքավորումների վարձակալություն	473.0	0.0	0	0	0	0	0
6	Համակարգչային ծառայություններ		0.0	100	100	100	100	100
7	Տեղեկատվական ծառայություններ		0.0	0	50	50	50	50
8	Մասնագիտական ծառայություններ	10.0	0.0	0	0	0	0	0
9	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	290.0	0.0	100	100	100	100	100
10	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	0	0	0	0	0	0	0
11	Գրասենյակային նյութեր և հագուստ	30.0	130	150	155	160	170	200

12	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	0	0	0	0	0	0	0
13	Հատուկ նպատակային այլ նյութեր	32.0	80.0	0	0	0	0	0
14	Այլ նպաստներ բյուջեից	500.0	230.0	600	600	630	650	700
15	Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	75.0	75.0	75	75	75	75	75
16	Պահուստային միջոցներ		215.0	904	490	965	1160	1305
17	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	2371.0	7456.7	1257	500	700	1200	1300
	Ընդամենը	17767.4	21357.9	18058.2	17550	18280	19075	19480

5 ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՑԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀԶԾ-ի կառավարման ԲԱԽ-երի և ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ16)՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացումը ապահովելու համար:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ

5.1 Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում (հազար դրամ)

- ❖ 2015 թ. փաստացի –500.0
- ❖ 2016 թ. փաստացի—230.0
- ❖ 2017 թ. նախատեսված է բյուջեով—600.0
- ❖ 2018 թ—նախատեսվում է 530.0
- ❖ 2019թ-- նախատեսվում է 570.0
- ❖ 2020թ-- նախատեսվում է 600.0
- ❖ 2021թ-- նախատեսվում է 630.0

5.2 Աղբահանության աշխատանքների իրականացում (հազար դրամ)

- ❖ 2015 թ. փաստացի –906,0
- ❖ 2016 թ. փաստացի—1115,2
- ❖ 2017 թ. նախատեսված է բյուջեով—900.0
- ❖ 2018 թ—նախատեսվում է 1200
- ❖ 2019թ-- նախատեսվում է 1200.0
- ❖ 2020թ-- նախատեսվում է 1250.0
- ❖ 2021թ-- նախատեսվում է 1300.0

5.3 Կոյուղու և կոլեկտորի կառուցում (հազար դրամ)

- ❖ 2018-2020 թվականներին 30000.0 – 35000.0

5.4 Ներհամայնքային ճանապարհների նորոգում փոսալցումների և հիմնական նորոգումների տեսքով (հազար դրամ)

- ❖ 2015 թ. փաստացի –2000.0
- ❖ 2018 թ—նախատեսվում է 800.0
- ❖ 2021թ-- նախատեսվում է 900.0

5.5 համայնքապետարանի նստավայրի գազաֆիկացում (հազար դրամ)

❖ 2017 թվական - 800.0 -1000.0

5.6 Ոռոգման ցանցի ընթացիկ վերանորոգում (հազար դրամ)

❖ 2018 --2021 թթ 500.0

5.7 Փողոցների գիշերային լուսավորության ցանցի խնայող ռեժիմի անցում և համալրում (հազար դրամ)

❖ 2018 թ--նախատեսվում է 250.0

❖ 2019թ-- նախատեսվում է 300,0

5.9 Ակումբի շենքի հարակից տարածքի բարեկարգում և կառուցապատում (հազար դրամ)

❖ 2019թ-- նախատեսվում է 700.0

❖ 2021թ-- նախատեսվում է 600.0

5.10 Նոր տնկված անտառաշերտի խնամք և պահպանություն (հազար դրամ)

❖ 2016 թ. փաստացի—400.0

❖ 2017 թ. նախատեսված է բյուջեով—300.0

❖ 2018 թ--նախատեսվում է 300.0

❖ 2019թ-- նախատեսվում է 300.0

5.11 Միջնակարգ դպրոցի գույքի համալրում (հազար դրամ)

❖ 2019թ-- նախատեսվում է 500.0

❖ 2020թ-- նախատեսվում է 500.0

❖ 2021թ-- նախատեսվում է 500.0

5.12 Համայնքում գործող հանդիսությունների սրահի գույքի համալրում (ձեռք բերել միանման սեղան նստարաններ) (հազար դրամ)

❖ 2015 թ. փաստացի -300.0

❖ 2016 թ. փաստացի—750.0

❖ 2018 թ--նախատեսվում է 450.0

5.13 Արտոտավայրերում ջրելատեղերի (ջրախմոցերի և տաշտերի) տեղադրում (հազար դրամ)

❖ 2019թ-- նախատեսվում է 570.0

❖ 2020թ-- նախատեսվում է 600.0

6. ԲԵՆԻԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Բենիամին համայնքի սեփականություն համարվող գույքի (այդ թվում՝ հողերի) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2017-2021 թթ. ընթացքում համայնքը չունի օտարման ենթակա որևէ շենք կամ շինություն: Առկա են վարձակալության ենթակա հողամասեր:

Աղյուսակ. Բենիամին համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների, հողամասերի և այլն) կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը, 2017-2021թթ.

/հ	Գույքի անվանումը	Հասցեն	Տարածքը/ մակերեսը / քանակը (մ ² / հատ)	Վիճակի գնահատականը	Այլ բնութագրիչներ	2017	2018	2019	2020	2021	Ենթակառուցված, վարձակալության տրամադրման
1.	վարելահող	Բենիամին	114 հա		գյուղնշանակության	114	114	114	114	114	Վարձակալություն
2.	Արոտներ	Բենիամին	257.0 հա		գյուղնշանակության	257	257	257	257	257	Վարձակալություն

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի՝ իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների, տեղական ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ իզիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲԵՆԻԱՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/հ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2015թ. փաստ.	2016թ. փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1.	Համայնքի վարչական տարածքը	հա	860.54	860.54	560.54	860.54	860.54	860.54	860.54
2.	Բնակչության թիվը	մարդ	757	755	757	757	745	747	740
	Անհատական բնակելի տների թիվը	տուն	160	160	160	160	160	160	160
	Անհատական բնակելի տների մակերեսը	քմ	30260	30260	30260	30260	30260	30260	30260
4.	Վթարային շենքերի թիվը	շենք	3	3	3	3	3	0	0
5.									
6.	Ավտոտնակների թիվը	հատ	65	65	65	65	65	68	70

7.	Համատիրությունների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
8.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	48	48	48	48	48	50	55
	Այդ թվում՝ բնակչությունից		48	48	48	48	48	50	55
	Աղբավայրի առկայությունը և զբաղեցրած տարածքը	հազ.քմ	0	0	0	0	0	0	0
9.	Սանիտարական մաքրման և աղբահանության մեքենայական պարկի մեքենա-մեխանիզմներ քանակը	միավոր	0	0	0	0	0	0	0
10.	Սանիտարական մաքրման տարածքը	հա	22	22	22	22	22	25	25
11.	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	10.4	10.4	10.4	10.4	10.4	10.4	10.4
12.	Ոռոգելի տարածքի մակերեսը	հա	1600	160	160	160	160	160	160
13.									
14.									
15.	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	9.6	9.6	9.6	9.6	9.6	10.6	11.5
16.	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ	80	80	80	80	80	85	90
17.	Առևտրի և ծառայությունների Օբյեկտների թիվը, այդ թվում՝	հատ	3	3	3	3	3	3	3

	առևտրի օբյեկտներ	հատ	2	2	2	2	2	2	2
	ժ. 24-ից հետո աշխատող օբյեկտներ	հատ	0	0	0	0	0	0	0
	Բենզինի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0
	Գազի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0
20.	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ.	4	4	4	4	5	6	6
21.	Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքներ	- // -	20	20	20	25	30	35	40
22.	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ							
	Երեխաների թիվը	մարդ							
	Խմբերի թիվը	խումբ							
23.	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Աշակերտների թիվը	մարդ	87	87	87	85	88	88	90
24.	Երաժշտական դպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
	Սովորողների թիվը	մարդ	18	18	18	19	20	20	22

25.	Մարզադպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
26.	Արտադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
27.	Ակումբների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
8.	Հիվանդանոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
	Մահճակալների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
29.	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
30.	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	87	87	87	87	90	95	100
31.	Հաշմանդամների թիվը	մարդ	18	18	18	18	22	26	30
32.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	մարդ	112	112	115	120	130	140	145
33.	Գործազուրկների թիվը	մարդ	200	200	200	200	210	215	220
34.	Փախստականների թիվը	մարդ	0	0	0	0	0	0	0
35.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ.	21	21	23	25	28	30	35
36.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	հազ. դրամ	20.5	28.3	23.85	23.18	24.53	25.53	26.32
37.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը	հազ. դրամ	20.5	28.3	23.85	23.18	24.53	25.53	26.32
38.	Մեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ	%	32	478	37	32	32	32	31
39.	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%	13,3	34,9	69	28,5	38,3	62,9	66,7
40.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	77,7	76,1	90-100	90-100	90-100	90-100	90-100
41.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	%	77,7	76,1	90-100	90-100	90-100	90-100	90-100
42.	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	89,5	87,1	90-100	90-100	90-100	90-100	90-100
43.	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	%	89,5	87,1	90-100	90-100	90-100	90-100	90-100
44.	Համայնքի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%	68	67.7	71,9	76,3	73,34	70,2	68,7